

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/7**

**28 մարտի 2017թ.**

Քննարկվեց «Կրթեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ դիմումով բերված միջնորդությունը շրջանառության հարկի դաշտում գործունեություն իրականացնելու վերաբերյալ:

#### **«Կրթեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ դիմումում բերված փաստարկները.**

Դիմումատուն հայտնում է, որ 15.01.2017թ. լրացրել է հայտարարություն շրջանառության հարկով աշխատելու մասին, որը տեղադրված է ՊԵԿ-ի սերվերում: Սակայն թյուրիմացաբար հայտարարությունը չի ստորագրվել և չի հանձնվել ՊԵԿ-ին:

Ներկայումս հայտարարությունը հնարավոր չէ հանձնել՝ կազմակերպությունը ստանում է պատասխան, որ արդեն հաշվառվել է որպես ԱԱՀ վճարող:

Դիմումատուն հայտնում է նաև, որ 2016թ. շրջանառությունը կազմել է 35.610.0000 դրամ, որ կազմակերպությունը մշտապես վճարել է բոլոր պարտավորությունները ժամանակին:

Դիմումատուն խնդրում է հաշվի առնելով վերը բերված հանգամանքները թույլ տալ 2017թ. աշխատել շրջանառության հարկով հարկման դաշտում:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Կրթեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից 15.01.2017թ. լրացրվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն այն սահմանված ժամկետում չի ստորագրվել: Արդյունքում ընկերությունը զրկվել է շրջանառության հարկ վճարող համարվելու հնարավորությունից և համարվել է ԱԱՀ վճարող:

Տվյալ դեպքում ընկերության կողմից 15.01.2017թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը լրացվելու վերաբերյալ պնդումները հավաստի են, քանի որ դրանում կարելի է համոզվել ՀՀ ԿԱ ՊԵԿ սերվերի ուսումնասիրության արդյունքում:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ Շենգավիթի ՀՏ 31.01.2017թ. ընկերությանն էլեկտրոնային եղանակով ուղարկվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցագիր N1-ը: Նշված ծանուցագրով ընկերությանը տեղեկացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու համար մինչև փետրվարի 20-ը հաշվառման վայրի հարկային մամնին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու անհրաժեշտության մասին: Ընդ որում, ծանուցագրի 4-րդ կետի համաձայն, եթե հարկային մարմինը ծանուցումը ուղարկել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացնելու ժամկետից հետո, ապա որպես շրջանառության

հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետ է սահմանվում հարկ վճարողին ծանուցումը տրամադրելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հրապարակային ծանուցումը պետք է ներկայացնի այն հրապարակելու լիազորություն ունեցող անձը կամ նրա լիազորած անձը:

Տվյալ դեպքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցագիր N1-ը ներկայացվել է Շենգավիթի ՀՏ համապատասխան աշխատակիցը, սակայն վերջինիս կողմից նման լիազորություն ունենալու վերաբերյալ ապացույց սույն գործում առկա չէ:

Մինչույն ժամանակ, քննարկվող դեպքում Հանձնաժողովը հաշվի է առնում, որ ընկերությունը մշտապես համարվել է շրջանառության հարկ վճարող, շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը ընկերության կողմից 15.01.2017թ. տեղադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ սերվերում, ինչպես նաև այն, որ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չստորագրվելը պայմանավորված է եղել հայտարարությունը էլեկտրոնային եղանակով առաջին անգամ ներկայացվելու հանգամանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության դիմումով բերված միջնորդությունը՝ շրջանառության հարկի դաշտում գործունեություն իրականացնելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ, անհրաժեշտ է բավարարել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

#### ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչությանը.

«Կրթեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2017թ. ընթացքում ընկերությանը համարել որպես շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ